ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-դեկտեմբեր)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %










Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2019թ. հունվար-դեկտեմբերին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) արձանագրել է աճ՝ կազմելով՝ 107.8%, 2018թ. հունվար-դեկտեմբերին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 105.6%-ի, իսկ 2017թ. հունվար-դեկտեմբերին 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 107.7%-ի դիմաց:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-դեկտեմբերին կազմել է 2,103,913.7 մլն.դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 366,228.1 և 442,918.4 մլն. դրամով:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-դեկտեմբերին կազմել է 852,788.9 մլն.դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 36,9119.7 և 53,971.2 մլն. դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-դեկտեմբերին կազմել է 434,602.0 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 12,300.0 և 18,728.7 մլն. դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-դեկտեմբերին կազմել է 3,249,220.5 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 317,725.7 և 647,088.3 մլն. դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-դեկտեմբերին կազմել է 2,062,372.8 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 297,621.6 և 608,857.3 մլն. դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-դեկտեմբերին 2018թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 109.0%, 2018 և 2017թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.3%-ի և 112.6%-ի պարագայում:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-դեկտեմբերին 2018թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 95.8%, 2018 և 2017թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 92.4%-ի և 97.0%-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Առևտրի շրջանառության իրական աճը 2019թ. հունվար-դեկտեմբերին 2018թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 108.9%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.7%-ի և 114.0%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-դեկտեմբերին 2018թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 115.0%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 118.8%-ի և 114.4%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 356,308.0 մլն.դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 55,562.8 և 18,544.4 մլն. դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 1,468,722.0 մլն. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 316,445.4 և 429,337.0 մլն. դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 253,977.8 մլն. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 5,009.6 և 4,847.2 մլն. դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 24,905.9 մլն.դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 770.5 և 115.8 մլն. դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-դեկտեմբերին 2018թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 123.9%, 2018 և 2017 թթ., ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 86.0%-ի և 113.9%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-դեկտեմբերին 2018թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 107.6%, 2018 և 2017թթ., ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 110.0%-ի և 115.7%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-դեկտեմբերին 2018թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 100.0%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 105.7%-ի և 101.2%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-դեկտեմբերին 2018թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 96.9%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 98.0%-ի և 108.1%-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ







Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-դեկտեմբերին կազմել է 488,573.5 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 97,268.6 և 203,807.8 մլն. դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-դեկտեմբերին դեկտեմբերին կազմել է 272,512.8 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 26,765.8 և 38,715.2 մլն. դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-դեկտեմբերին կազմել է 441,599.8 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 74,279.7 և 139,611.1 մլն. դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-դեկտեմբերին 2018թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 122.3%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 136.6%-ի և 122.3%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-դեկտեմբերին 2018թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 110.7%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.7% և 105.3%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-դեկտեմբերին 2018թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 116.5%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև  2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 119.6%-ի և 120.6%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2019թ. հունվար-դեկտեմբերին 2018թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 101.4%, 2018թ. հունվար-դեկտեմբերին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ` 102.5%, 2017թ. հունվար-դեկտեմբերին 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ` 101.0%: ՍԳԻ-ն 2019թ.դեկտեմբերին 2018թ.դեկտեմբերի նկատմամբ կազմել է 100.7%, 2018թ. դեկտեմբերին 2017թ. դեկտեմբերի նկատմամբ` 101.8%, 2017թ. դեկտեմբերին 2016թ.դեկտեմբերի նկատմամբ` 102.6%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2019թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 1,067,812.0 մլն դրամ, ինչը 389,276.0 մլն. դրամով կամ 57.4%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 404,994.0 մլն. դրամով կամ 61.1%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2019թ. դեկտեմբերի դրությամբ կազմել է 84982 մարդ, ինչը 3299 մարդով կամ 4.04%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1001 մարդով կամ 1.16%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2019թ. դեկտեմբերի դրությամբ կազմել է 62005 մարդ, ինչը 2885 մարդով կամ 4.4%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 8867 մարդով կամ 12.5%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)




ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)




Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ




Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինանսավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ




Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2019թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 8,154.1 մլն. դոլար, ինչը 766.1 մլն. դոլարով կամ 10.4%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1,819.3 մլն. դոլարով կամ 28.7%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2019թ. հունվար-դեկտեմբերին կազմել է -2,873.5 մլն. դոլար, ինչը 310.4 մլն. դոլարով կամ 12.1%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1,014.2 մլն. դոլարով կամ 54.5%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2019թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 2,640.3 մլն դոլար, ինչը 227.8 մլն. դոլարով կամ 9.4%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 402.6 մլն. դոլարով կամ 18.0%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2019թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 5,513.8 մլն դոլար, ինչը 538.3 մլն. դոլարով կամ 10.8%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1,416.7 մլն. դոլարով կամ 34.6%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2019թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 182673 դրամ, ինչը 10316 դրամով կամ 6.0%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1586 դրամով կամ 6.0%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2019թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -63,939.4 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -6,643.2 մլն. դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 70,582.6 մլն. դրամ: 2018թ. ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -105,372.8 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 70,017.8 և 35,355.0 մլն դրամ: 2017թ. ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -266,728.0 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 77,142.1 և 189,585.9 մլն. դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ